«Վեգա Ուորլդ» ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն

2022թ. դեկտեմբերի 31

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն 1

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 4

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 5

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 6

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 7

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 9

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Վեգա Ուորլդ» ՍՊԸ մասնակիցներին և ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Վեգա Ուորլդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 2022թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Վեգա Ուորլդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ֆինանսական վիճակը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» հատվածում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների՝ մեր աուդիտի համար կիրառելի վարքագծի պահանջների, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Crowe and Asatryans LLC
"Dom Moskvy" Business Center,
7, Argishti str., 2nd floor,
Yerevan, 0015, Armenia
T. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
general@asatryans.com
www.crowe.com
www.asatryans.com

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ
"Դոմ Մոսկվի" Բիզնես Կենտրոն,
Արգիշտի փող., 7, 2-րդ հարկ,
ք. Երևան, 0015, ՀՀ
Հ. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
general@asatryans.com
www.crowe.com
www.asatryans.com

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը ամենաբարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության համակարգի մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների հիմնավորվածությունը:

- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման աընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք , թե արդյեք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության

Crowe

անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Մենք կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի՝ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ վարքագծի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, որտեղ կիրառելի է, նախազգուշական միջոցառումների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք համալրվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Այս աուդիտի առաջադրանքի պատասխանատուն Ալբերտ Ասատրյանն է:

23 հունիսի 2023թ.

Ալբերտ Ասատրյան

Տնօրեն-բաժնետեր,
առաջադրանքի ղեկավար

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծնթ.	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	4	25,790,573	20,210,372
Վաճառքի ինքնարժեք	5	(22,874,956)	(17,325,328)
Համախառն շահույթ		2,915,618	2,885,044
Այլ եկամուտ	6	302,700	1,867,153
Իրացման ծախսեր	7	(1,330,879)	(815,895)
Վարչական ծախսեր	8	(2,670,360)	(2,135,404)
Այլ ծախսեր	6	(483,386)	(5,118,085)
Գործառնական գործունեությունից շահույթ/(վնաս)		(1,266,307)	(3,317,187)
Ֆինանսական եկամուտ	9	22	97
Ֆինանսական ծախսեր	9	(960,566)	(583,557)
Այլ ֆինանսական հոդվածներ	10	840,609	(172,253)
Շահույթ/(վնաս) մինչև հարկերը		(1,386,242)	(4,072,900)
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	11	91,113	(30,257)
Տարվա շահույթ/(վնաս)		(1,295,129)	(4,103,157)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		(1,295,129)	(4,103,157)

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2023թ. հունիսի 23-ին՝

Մարինե Պողոսյան
Տնօրեն

Գոհար Մանուկյան
Գլխավոր հաշվապահ

«ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ»
„ВЕГА УОРЛД"
„VEGA WORLD"
02704414

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծնթ.	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	12	3,868,225	2,620,522
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	13	1,615,430	1,221,302
Ոչ նյութական ակտիվներ		1,554	1,785
Հետաձգված հարկային ակտիվ	14	-	190
		5,485,209	3,843,798
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	15	14,395,753	12,615,299
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	16	2,137,530	1,699,672
Ընթացիկ հարկային ակտիվներ		-	-
Դրամական միջոցներ և համարժեքներ	17	1,416,559	449,398
		17,949,842	14,764,369
Ընդամենը ակտիվներ		23,435,051	18,608,167
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ			
Բաժնետիրական կապիտալ	18	8,500,100	6,500,100
Լրացուցիչ կապիտալ		5,865,643	-
Վերագնահատման պահուստ		-	-
Կուտակված շահույթ/(վնաս)		(6,557,435)	(5,262,305)
		7,808,308	1,237,795
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	19	4,934,389	-
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	20	1,365,822	815,156
Հետաձգված հարկային պարտավորություններ	14	1,195,303	-
		7,495,514	815,156
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	19	5,648,625	14,576,050
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	21	1,927,764	1,376,030
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		-	-
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	20	362,209	464,487
Պահուստներ	22	192,632	138,649
		8,131,230	16,555,216
		15,626,743	17,370,372
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		23,435,051	18,608,167

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 42-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ/(վնաս)	Լրացուցիչ կապիտալ	Ընդամենը
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	4,500,100	(1,159,148)	-	3,340,952
Տարվա շահույթ/(վնաս)	-	(4,103,157)	-	(4,103,157)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	(4,103,157)	-	(4,103,157)
Կանոնադրական կապիտալի համալրում	2,000,000	-	-	2,000,000
Գործարքներ սեփականատերերի հետ	2,000,000	-	-	2,000,000
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,500,100	(5,262,305)	-	1,237,795
Տարվա շահույթ/(վնաս)	-	(1,295,129)		(1,295,129)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-		-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	(1,295,129)		(1,295,129)
Կանոնադրական կապիտալի համալրում	2,000,000	-	5,865,643	7,865,643
Գործարքներ սեփականատերերի հետ	2,000,000	-		7,865,643
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,500,100	(6,557,434)	5,865,643	7,808,309

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 42-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա վնաս	(1,295,129)	(4,103,157)
Ճշգրտումներ՝		
Շահութահարկի գծով ծախս	(91,113)	30,257
Մաշվածություն և ամորտիզացիա	444,299	183,926
Պահուստներում փոփոխություններ	53,983	138,649
Ֆինանսական ծախս/(եկամուտ)	960,544	583,460
Հիմնական միջոցների օտարումից (օգուտ)/վնաս	(623)	(1,747)
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	(840,609)	172,253
Գործառնական շահույթ/(ծֆաՍ) նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	(768,647)	(2,996,359)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(782,228)	(1,151,450)
Պաշարների փոփոխություն	(1,780,454)	423,395
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	786,454	257,424
Վարձակալության գծով պարտավորության մարում	(479,274)	(380,112)
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ	(3,024,150)	(3,847,102)
Վճարված տոկոսներ	(384,055)	(429,729)
Վճարված շահութահարկ	(974)	(41,097)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(3,409,179)	(4,317,928)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,349,076)	(410,797)
Ստացված տոկոսային եկամուտ	22	59
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(1,349,054)	(410,738)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն(շարունակություն)

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերից և փոխառություններից մուտքեր	17,301,357	18,567,932
Վարկերի և փոխառությունների մարում	(13,343,431)	(15,630,932)
Տրված շնորհներ	(46,513)	(164,013)
Շնորհներից մուտքեր	-	13,777
Կանոնադրական կապիտալի համալրում	2,000,000	2,000,000
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	5,911,413	4,786,764
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	1,153,180	58,098
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(186,020)	(77,468)
Դրամական միջոցների և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	449,398	468,768
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ	1,416,558	449,398

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 42-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Վեգա Ուորլդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ «Ընկերություն») գրանցվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում՝ 2008թ. փետրվարի 22-ին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Ընկերությունը իրականացնում է գործունեության հետևյալ տեսակները՝

- Ապրանքների մանրամեծածախ վաճառք

«Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ն շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 8,500,100 հազ. դրամ: Ընկերության մասնակիցներ են հանդիսանում Պողոսյան Մարինեն, որին պատկանում է Ընկերության բաժնեմասերի 14.71%-ը և Յուրի Աֆրիկյանը, որին պատկանում է Ընկերության բաժնեմասերի 85.29%-ը:

Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան փող. 4/1:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության աշխատակիցների թվաքանակը կազմել է 1 152 մարդ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 918 մարդ):

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական ֆունկցիոնալ արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական

2.5 Նոր և փոփոխված ՖՀՄՍ ստանդարտներ, որոնք ուժի մեջ են մտնում ընթացիկ տարվա համար

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Ընկերությունն առաջին անգամ կիրառել է որոշակի ստանդարտներ և փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2022թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որը թողարկվել է, բայց դեռ ուժի մեջ չի մտել:

ՖՀՄՍ հիմնադրամի կողմից ավարտված ծրագրեր	Նշված ամսաթվից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար	Կիրառելիությունը
Կոմիսիոն վճարները Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման "*10 տոկոս"-ի թեստում* (ՖՀՄՍ 9-ի փոփոխություն)	1 Հունվարի, 2022թ.	Ընդունված
Անբարենպաստ պայմանագրեր – Պայմանագրի կատարման ծախսեր (ՀՀՄՍ 37-ի փոփոխություն)	1 Հունվարի, 2022թ.	Ընդունված
Հիմնական միջոցներ. Մուտքեր մինչև նախատեսված օգտագործումը (ՀՀՄՍ 16-ի փոփոխություն)	1 Հունվարի, 2022թ.	Ընդունված
Դուստր կազմակերպությունը որպես առաջին անգամ որդեգրող (ՖՀՄՍ 1-ի փոփոխություն)	1 Հունվարի, 2022թ.	Ընդունված
Հարկումը իրական արժեքի չափման մեջ (ՀՀՄՍ 41-ի փոփոխություն)	1 Հունվարի, 2022թ.	Ընդունված
Թարմացումներ Հայեցակարգային հիմունքներին հղումում (ՖՀՄՍ 3-ի փոփոխություն)	1 Հունվարի, 2022թ.	Ընդունված

ՖՀՄՍ 9. "Ֆինանսական գործիքներ" - Կոմիսոան վճարները Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման "10 տոկոս"-ի թեստում

Փոփոխությունը պարզաբանում է կոմիսիոն վճարները, որոնք Ընկերությունը ներառում է՝ գնահատելիս՝ արդյոք նոր կամ փոփոխված ֆինանսական պարտավորության պայմանները էապես տարբերվում են սկզբնական ֆինանսական պարտավորության պայմաններից: Այս վճարները ներառում են միայն փոխառուի և փոխատուի միջև վճարված կամ ստացված վճարները, ներառյալ փոխառուի կամ փոխատուի կողմից մյուսի անունից/օգտին վճարված կամ ստացված վճարները: ՀՀՄՍ 39. *"Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը"* ստանդարտի համար նման փոփոխություն չի առաջարկվում:

Անցումային դրույթների համաձայն՝ Ընկերությունը կիրառում է փոփոխությունը ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, որոնք փոփոխվել են տարեկան հաշվետու ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո, երբ Ընկերությունն առաջին անգամ կիրառում է փոփոխությունը (սկզբնական կիրառման ամսաթիվը):

Անբարենպաստ պայմանագրեր – Պայմանագրի կատարման ծախսեր - ՀՀՄՍ 37-ի փոփոխություն

Անբարենպաստ պայմանագիրը պայմանագիր է, որով նախատեսված պարտականությունները կատարելու անխուսափելի ծախսումները (այսինքն՝ այն ծախսումները, որոնցից Ընկերությունը չի կարող խուսափել, քանի որ ունի այդ պայմանագիրը) գերազանցում են այդ պայմանագրից ակնկալվող ստացվելիք տնտեսական օգուտները:

Փոփոխությունները սահմանում են, որ երբ գնահատվում է արդյոք պայմանագիրը անբարենպաստ է կամ ոչ շահութաբեր, Ընկերությունը պետք է ներառի այն ծախսումները, որոնք ուղղակիորեն առնչվում են ապրանքների կամ ծառայությունների մատուցման պայմանագրին, ներառյալ ուղղակի ծախսումները (օրինակ՝ ուղղակի աշխատանքի և նյութերի ծախսումները) և պայմանագրային գործունեության հետ անմիջականորեն կապված վերադիր ծախսերը (օրինակ՝ պայմանագրի կատարման համար օգտագործվող սարքավորումների մաշվածություն, պայմանագրի կառավարման և վերահսկողության ծախսեր): Ընդհանուր և վարչական ծախսերը ուղղակիորեն չեն առնչվում պայմանագրին և չեն ներառվում, եթե դրանք հստակ ենթակա չեն վճարման կոնտրագենտի կողմից՝ համաձայն պայմանագրի:

Հիմնական միջոցներ. Մուտքեր մինչև նախատեսված օգտագործումը - ՀՀՄՍ 16-ի փոփոխություն

Փոփոխություններն արգելում են հիմնական միջոցների միավորի արժեքից հանել մինչև այդ ակտիվի օգտագործման համար հասանելի լինելը արտադրված նմուշների վաճառքից ստացված ցանկացած հասույթ, այսինքն՝ հասույթը՝ մինչև ակտիվը համապատասխան վայր հասցնելը և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելը: Հետևաբար, Ընկերությունը ճանաչում է նման վաճառքից հասույթը և դրա հետ կապված ծախսերը շահույթում կամ վնասում: Ընկերությունը չափում է այդ նմուշների արժեքը՝ համաձայն ՀՀՄՍ 2. "Պաշարներ" ստանդարտի:

Փոփոխությունները նաև պարզաբանում են, թե ինչ է նշանակում "ակտիվի անխափան աշխատանքի տեստավորում": ՀՀՄՍ 16-ն այժմ սահմանում է սա որպես գնահատում, թե արդյոք ակտիվի տեխնիկական և ֆիզիկական արդյունավետությունն այնպիսին է, որ այն կարող է օգտագործվել ապրանքների կամ ծառայությունների արտադրության կամ մատակարարման, այլոց վարձակալության կամ վարչական նպատակների համար:

Եթե համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում առանձին չի ներկայացվում, ապա ֆինանսական հաշվետվությունները պետք է բացահայտեն շահույթում կամ վնասում ներառված հասույթի և ծախսերի գումարները, որոնք վերաբերում են արտադրված նմուշներին, որոնք Ընկերություն սովորական գործունեության արդյունք չեն, և թե համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որ հոդված(ներ)ն է(են) ներառում այդպիսի հասույթներ և ծախսեր:

ՖՀՄՍ 1. "Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրումը" - Դուստր կազմակերպությունը որպես առաջին անգամ որդեգրող

Փոփոխությունը թույլ է տալիս դուստր կազմակերպությանը, որն ընտրում է կիրառել ՖՀՄՍ 1-ի Դ16(ա) պարագրաֆը՝ չափելու վերահաշվարկման կուտակային տարբերությունները՝ օգտագործելով մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարները՝ հիմնվելով մայր կազմակերպության ՖՀՄՍ-ին անցնելու ամսաթվի վրա, եթե ճշգրտումներ չեն կատարվել համախմբման ընթացակարգերի նպատակով և այն բիզնեսի միավորման արդյունքները հաշվի առնելու նպատակով, որի արդյունքում մայր կազմակերպությունը ձեռք է բերել դուստր կազմակերպությունը: Այս փոփոխությունը նաև կիրառվում է ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկության նկատմամբ, որն ընտրում է կիրառել ՖՀՄՍ 1-ի Դ16(ա) պարագրաֆը:

ՀՀՍՍ 41. "Գյուղատնտեսություն" – Հարկումը իրական արժեքի չափման մեջ

Այս փոփոխությամբ չեղարկվում է ՀՀՍՍ 41-ի 22-րդ պարագրաֆի պահանջը, ըստ որի՝ կազմակերպությունները չեն ներառում հարկերի վճարման համար դրամական միջոցների հոսքերը, երբ չափում են ակտիվների իրական արժեքը ՀՀՍՍ 41-ի շրջանակներում:

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Ընկերությունը չունի ակտիվներ ՀՀՍՍ 41-ի շրջանակներում հաշվետու ամսաթվի դրությամբ:

Թարմացումներ Հայեցակարգային հիմունքներին հղումում - ՖՀՍՍ 3-ի փոփոխություն

Փոփոխությունները թարմացնում են ՖՀՍՍ 3-ը, այնպես որ այն հղում անի 2018թ. Հայեցակարգային հիմունքներին 1989թ. հիմունքների փոխարեն: Դրանք նաև ՖՀՍՍ 3-ում ավելացնում են պահանջ, ըստ որի՝ ՀՀՍՍ 37. *"Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ"* ստանդարտի շրջանակում ընդգրկված պարտավորությունների համար ձեռք բերողը կիրառում է ՀՀՍՍ 37-ը՝ որոշելու, թե արդյոք ձեռքբերման ամսաթվին ներկա պարտավորություն գոյություն ունի անցյալ դեպքերի արդյունք: Այն պարտադիր վճարների համար, որոնք գտնվում են ՖՀՍՍՍԿ 21 Պարտադիր վճարներ մեկնաբանության շրջանակում, ձեռքբերողը կիրառում է ՖՀՍՍՍԿ 21-ը՝ որոշելու համար, թե արդյոք այն պարտավորեցնող իրադարձությունը, որն առաջացնում է պարտադիր վճարը վճարելու պարտավորություն, տեղի է ունեցել մինչև ձեռքբերման ամսաթիվը:

Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը էական ազդեցություն կունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Նոր և վերանայված ՖՀՍՍ ստանդարտներ, որոնք հրապարակված են, բայց դեռևս ուժի մեջ չեն մտել

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Ընկերությունը չի կիրառել հետևյալ նոր և վերանայված ՖՀՍՍ ստանդարտները, որոնք թողարկվել են, բայց դեռ ուժի մեջ չեն.

ՖՀՍՍ հիմնադրամի կողմից ավարտված ծրագրեր	Նշված ամսաթվից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար	Կիրառելիությունը
Փոփոխություններ ՖՀՍՍ 10-ում. "*Համախմբված ֆինանսական հաշվետվություններ"* և ՀՀՍՍ 28. *"Ներդրումներ ասոցիացված և դուստր ընկերություններում"* - Ներդրողի և նրա ասոցիացված ընկերության կամ համատեղ ձեռնարկության միջև ակտիվների վաճառք կամ ներդրում	Դեռևս չի սահմանվել ՖՀՍՍ Խորհրդի կողմից	-
Փոփոխություններ ՀՀՍՍ 1-ում. *"Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում"* Պարտավորությունների դասակարգումը ընթացիկի և ոչ ընթացիկի	1 Հունվարի, 2024թ.	Հետընթաց
Փոփոխություններ ՀՀՍՍ 1-ում. *"Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում"* և ՖՀՍՍ պրակտիկայի գծով հայտարարություն 2 (Էականության որոշման դատողությունների իրականացում) – Հաշվապահական քաղաքականության բացահայտումներ	1 Հունվարի, 2023թ.	Առաջընթաց
Փոփոխություններ ՀՀՍՍ 8-ում. *"Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ"* Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում	1 Հունվարի, 2023թ.	Առաջընթաց

Փոփոխություններ ՀՀՍՍ 12-ում. "*Շահութահարկեր*" Առանձին գործարքից բխող ակտիվների և պարտավորությունների հետ կապված հետաձգված հարկեր	1 Հունվարի, 2023թ.	Առաջընթաց
ՖՀՍՍ 17. *"Ապահովագրության պայմանագրեր"*	1 Հունվարի, 2023թ.	Առաջընթաց

Փոփոխություններ ՖՀՍՍ 10-ում. "Համախմբված ֆինանսական հաշվետվություններ" և ՀՀՍՍ 28. "Ներդրումներ ասոցիացված և դուստր ընկերություններում" - Ներդրողի և նրա ասոցիացված ընկերության կամ համատեղ ձեռնարկության միջև ակտիվների վաճառք կամ ներդրում

ՖՀՍՍ 10-ի և ՀՀՍՍ 28-ի փոփոխությունները վերաբերում են իրավիճակներին, երբ ներդրողի և նրա ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկության միջև կա ակտիվների վաճառք կամ ներդրում: Մասնավորապես, փոփոխությունները նշում են, որ դուստր կազմակերպության նկատմամբ (որը բիզնես չէ) վերահսկողության կորստից առաջացող օգուտները կամ վնասները բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկության հետ գործարքում, ճանաչվում են մայր կազմակերպության շահույթում կամ վնասում միայն այդ ասոցիացված կազմակերպությունում կամ համատեղ ձեռնարկումում չկապակցված ներդրողների բաժնեմասերի չափով: Նմանապես, ցանկացած նախկին դուստր կազմակերպությունում (որը դարձել է ասոցիացված կամ համատեղ ձեռնարկում, որը հաշվառվում է սեփական կապիտալի մեթոդով) պահպանված ներդրումների իրական արժեքով վերաչափումից առաջացած օգուտները և վնասները ճանաչվում են նախկին մայր կազմակերպության շահույթում կամ վնասում միայն նոր ասոցիացված կազմակերպությունում կամ համատեղ ձեռնարկումում չկապակցված ներդրողների բաժնեմասերի չափով:

Փոփոխություններ ՀՀՍՍ 1-ում. "Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում"՝ Պարտավորությունների դասակարգումը ընթացիկի և ոչ ընթացիկի

ՀՀՍՍ 1-ի փոփոխությունները, որոնք հրապարակվել են 2020թ. հունվարին, ազդում են միայն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում պարավորությունների՝ որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգման վրա, և ոչ ակտիվի, պարտավորության, եկամուտի կամ ծախսի ճանաչման գումարի կամ ժամկետի կամ դրանց մասին բացահայտված տեղեկատվության վրա:

Փոփոխությունները պարզաբանում են, որ պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ հիմնված է այն իրավունքների վրա, որոնք գոյություն ունեն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, նշում են, որ դասակարգման վրա չեն ազդում այն ակնկալիքները, թե արդյոք կազմակերպությունը կկիրառի իր՝ պարտավորության մարումը հետաձգելու իրավունքը, բացատրում են, որ իրավունքները գոյություն ունեն, եթե կովենանտները կատարված են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, և տալիս են մարման սահմանումը՝ հստակեցնելով, որ մարումը վերաբերում է դրամական միջոցների, բաժնային գործիքների, այլ ակտիվների ծառայությունների փոխանցմանը կոնտրագենտին:

Փոփոխություններ ՀՀՍՍ 1-ում. "Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում" և ՖՀՍՍ պրակտիկայի գծով հայտարարություն 2 (Էականության որոշման դատողությունների իրականացում) – Հաշվապահական քաղաքականության բացահայտումներ

Փոփոխությունները փոխում են ՀՀՍՍ 1-ի պահանջները՝ կապված հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտման հետ: Փոփոխությունները փոխարինում են "նշանակալի հաշվապահական հաշվառման քաղաքականություն" տերմինի բոլոր կիրառումները "հաշվապահական հաշվառման քաղաքականության էական տեղեկատվություն" տերմինով: Հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվությունը էական է, եթե, երբ դիտարկվում է կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում ներառված այլ տեղեկատվության հետ միասին, ողջամտորեն ակնկալվում է, որ այն կազդի ընդհանուր նպատակի ֆինանսական հաշվետվությունների հիմնական օգտագործողների կողմից այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացված որոշումների վրա:

ՀՀՍՍ 1-ի օժանդակ պարագրաֆները նույնպես փոփոխվել են՝ պարզաբանելու համար, որ հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվությունը, որը վերաբերում է ոչ էական գործարքներին, այլ իրադարձություններին կամ պայմաններին, էական չէ և բացահայտման կարիք չունի: Հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվությունը կարող է էական լինել պայմանավորված գործարքների, այլ իրադարձությունների կամ պայմանների

բնույթով, նույնիսկ եթե գումարները էական չեն: Այնուամենայնիվ, հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ էական գործարքներին, այլ իրադարձություններին կամ պայմաններին վերաբերող ոչ բոլոր տեղեկություններն են ինքնին էական:

ՀՀՍՄԽ-ն նաև մշակել է ուղեցույցներ և օրինակներ՝ ՖՀՍՍ պրակտիկայի գծով հայտարարություն 2-ում նկարագրված "չորս քայլ էականության գործընթացի" կիրառումը բացատրելու և ցուցադրելու համար:

Փոփոխություններ ՀՀՍՍ 8-ում. "Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ"՝ Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում

Փոփոխությունները փոխարինում են հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխության սահմանումը հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանմամբ: Ըստ նոր սահմանման, հաշվապահական հաշվառման գնահատումները, ֆինանսական հաշվետվություններում ներկայացված դրամական գումարներ են, որոնք ենթակա են չափման անորոշությանե:

Փոփոխություններ ՀՀՍՍ 12-ում. "Շահութահարկեր"՝ Առանձին գործարքից բխող ակտիվների և պարտավորությունների հետ կապված հետաձգված հարկեր

Փոփոխությունները նախատեսում են ևս մեկ բացառություն սկզբնական ճանաչման ազատումից: Ըստ փոփոխությունների, կազմակերպությունը չի կիրառում սկզբնական ճանաչումից ազատումը այն գործարքների համար, որոնք առաջացնում են հավասար հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ:

Կախված կիրառելի հարկային օրենսդրությունից, հարկվող և նվազեցվող հավասար ժամանակավոր տարբերություններ կարող են առաջանալ ակտիվի և պարտավորության սկզբնական ճանաչման ժամանակ մի գործարքում, որը բիզնեսի միավորում չէ և չի ազդում ոչ հաշվապահական, ոչ հարկվող շահույթի վրա: Օրինակ, դա կարող է առաջանալ վարձակալության գծով պարտավորության և համապատասխան օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ճանաչման ժամանակ՝ կիրառելով ՖՀՍՍ 16-ը վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ:

ՀՀՍՍ 12-ի փոփոխություններից հետո կազմակերպությունից պահանջվում է ճանաչել համապատասխան հետաձգված հարկային ակտիվը և պարտավորությունը, ընդ որում ցանկացած հետաձգված հարկային ակտիվի ճանաչումը ենթակա է ՀՀՍՍ 12-ի փոխհատուցելիության չափանիշներին:

ՖՀՍՍ 17. "Ապահովագրության պայմանագրեր"

ՖՀՍՍ 17-ը սահմանում է ապահովագրական պայմանագրերի ճանաչման, չափման, ներկայացման և բացահայտման սկզբունքները և փոխարինում է ՖՀՍՍ 4 Ապահովագրության Պայմանագրեր ստանդարտին:

ՖՀՍՍ 17-ը տալիս է ընդհանուր մոդել (որը փոփոխված է ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրերի համար), որը նկարագրված է որպես փոփոխական վճարի մոտեցում: Ընդհանուր մոդելը պարզեցվում է, եթե որոշակի չափանիշները բավարարվում են՝ չափելով մնացորդային ծածկույթի գծով պարտավորությունը՝ կիրառելով ապահովագրական վճարների բաշխման մոտեցումը:

Ընդհանուր մոդելը օգտագործում է ընթացիկ ենթադրություններ ապագա դրամական միջոցների հոսքերի գումարը, ժամկետները և անորոշությունը գնահատելու համար, և այն հստակորեն չափում է այդ անորոշության արժեքը: Այն հաշվի է առնում շուկայական տոկոսադրույքները և ապահովադիրների օպցիոնների ու երաշխավորությունների ազդեցությունը:

Ընկերության ղեկավարությունը չի կանխատեսում, որ այս փոփոխությունների կիրառումն էական ազդեցություն կունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտորնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքները.

Արժույթ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱՄՆ դոլար	393.57	480.14
Ռուսական ռուբլի	5.59	6.42
Եվրո	420.06	542.61

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում: Նման ոչ դրամային հոդվածների դեպքում շահույթի կամ վնասի ցանկացած փոխարժեքային բաղադրիչ նույնպես ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

3.2 Հիմնական միջոցներ

Սկզբնական արժեքով հաշվառվող հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրս գրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի

տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը, հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	-	20 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	-	5 տարի
Տրանսպորտային միջոցներ	-	5 տարի
Արտադրական, տնտեսական գույք	-	8 տարի
Այլ հիմնական միջոցներ	-	8 տարի

3.4 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է:

Համակարգչային ծրագրեր	-	10 տարի

3.5 Վարձակալված ակտիվներ

Ընկերությունը նախ և առաջ գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում կամ պարունակում է վարձակալություն: Այսինքն, եթե պայմանագրով իդենտիֆիկացվող ակտիվի օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածով փոխանցվում է փոհատուցման դիմաց:

<u>Ընկերությունը որպես վարձակալ</u>

Ընկերությունը կիրառում է միանման մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալության: Ընկերությունը ճանաչում է պարտավորություն վարձակալության վճարները՝ <u>Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով</u>, որպեսզի վճարի վարձավճարները և <u>Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները</u>, որը իրենից ներկայացնում է տվյալ ակտիվի օգտագործման իրավունքը:

<u>**Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ**</u>

Ընկերությունը օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ճանաչում է վարձակալության սկզբում (այսինքն՝ այն ամսաթվով, երբ տվյալ ակտիվը մատչելի է օգտագործման համար): Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, և ճշգրտվում են <u>կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով</u> պարտավորության վարաչափումից: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է պարտավորություններում ճանաչված <u>կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով</u>

արժեքը, առաջացող սկզբնական ուղղակի ծախսումները և վարձավճարները, որոնք կատարվել են մինչև վարձակալությունը սկսելու ամսաթիվը կամ այդ ամսաթվին կատարված վարձավճարները, հանած վարձակալության գծով ստացված ցանկացած արտոնություններ կամ զեղչեր:

Այն դեպքում, երբ վարձակալած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության պայմանագրի ավարտին՝ վերջում, անցնում է Ընկերությանը կամ սկզբնական արժեքը արտացոլում է տվյալ վարձակալած ակտիվի գնման օպցիոն, ապա մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի գնահատված օգտակար ծառայության ժամկետով: գտագործման իրավունքի ձևով ակտիվները նույնպես պետք է արժեզրկման ստուգման (թեսթ) ենթարկվեն:

<u>Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով</u>

Վարձակալության սկսման պահին, Ընկերությունը <u>կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով</u> չափում է վարձակալության ժամանակահատվածի ընթացքում կատարված կամ կատարվելիք վարձավճարների <u>իրական արժեքով</u>: Վարձավճարները ներառում են՝ հաստատուն՝ ֆիքսված վճարները (ներառյալ հաստատուն վճարումները), հանած վարձակալության հետ կապված ցանկացած ստացվելիք խրախուսումներ, վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և որոնք սկզբնապես չափվել են՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույքը և գումարները, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձակալության վճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գինը, եթե վարձակալը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումները, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է վարձակալի՝ վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը:

Փոփոխուն վարձավճարները, որոնք կախված չեն որևէ ինդեքսից կամ տոկոսադրույքներից (ներառում են, օրինակ՝ վճարումներ՝ կապված սպառողական գների ինդեքսից, վճարումներ՝ կապված ուղենշային տոկոսադրույքից (ինչպես օրինակ՝ LIBOR-ը), ճանաչվում են ծախս այն ժամանակաշրջանում, որում այդ դեպքերը տեղի են ունեցել:

Վարձավճարների իրական արժեքը հաշվարկելիս, Ընկերությունը կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը վարձակալության սկզբի ամսաթվի դրությամբ, որովհետև վարձակալության պայմանագրի մեջ ենթադրյալ տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշվել: Վարձակալության սկսելուց հետո կրեդիտորական պարտքերը վարձակալության գծով ավելանում են (աճում են)՝ տոկոսների ավելացումով պայմանավորված, և նվազում են վարձավճարների վճարումով: Բացի դրանից, կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով հոդվածի հաշվեկշռային արժեքը վերաչափվում է, եթե առկա է ձևափոխություն, փոփոխություն, փոփոխություն վարձակալության ժամանակահատվածում, փոփոխություն վարձավճարում կամ տվյալ ակտիվի ձեռք բերման օպցիոնի գնահատման փոփոխություն:

3.6 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք առաջին ելք մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.7 Ֆինանսական գործիքներ

Այս ծանոթագրությունը տեղեկատվություն է տալիս Ընկերության ֆինանսական գործիքների վերաբերյալ, ներառյալ՝

- Ընկերության բոլոր ֆինանսական գործիքների ներկայացումը
- Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքների պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով: Գործարքի հետ կապված ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը կամ թողարկմանը (բացառությամբ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների) նախնական ճանաչման ժամանակ համապատասխանաբար գումարվում կամ պակասեցվում են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքից: Իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսերը անմիջապես ճանաչվում են շահույթ կամ վնասում:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը

- Ֆինանսական ակտիվներ ամորտիզացված արժեքով չափվող
- Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)
- Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող (ԻԱՉՇՎ)

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը

- Ֆինանսական պարտավորություններ ամորտիզացված արժեքով չափվող
- Ֆինանսական պարտավորություններ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)

<u>Ֆինանսական ակտիվներ ամորտիզացված արժեքով չափվող</u>

Պարտքային գործիքները, որոնք համապատասխանում են հետևյալ պայմաններին, սկզբնական ճանաչումից հետո չափվում են ամորտիզացված արժեքով, այն դեպքում, երբ.

- ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները պայմանագրային դրամական հոսքեր հավաքագրելու համար, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հատուկ օրերին ավելացնում են դրամական հոսքերը, որոնք պարզապես մայր գումարի և տոկոսագումարների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)

- ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է ապահովել պայմանագրային դրամական միջոցների հոսքեր և պահվում են վաճառքի նպատակով, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հատուկ օրերին ավելացնում են դրամական հոսքերը, որոնք պարզապես մայր գումարի և տոկոսագումարների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող (ԻԱՉՇՎ)

Մնացած բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք չեն ներառվում վերոնշյալների մեջ, ինքնստինքյան չափվում են իրական արժեքով շահույթ կամ վնասի միջոցով (ԻԱՉՇՎ):

Ֆինանսական պարտավորություններ ամորտիզացված արժեքով չափվող

Բոլոր ֆինանսական պարտավորությունները, սկզբնական ճանաչումից հետ, չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը կամ ԻԱՉՇՎ մեթոդը: Այնուամենայնիվ, ֆինանսական պարտավորությունները, որոնք առաջանում են, երբ ֆինանսական ակտիվի փոխանցումը չի համապատասխանում ապաճանաչմանը կամ երբ շարունակական ներգրավվածության մոտեցում է կիրառվում և Ընկերության կողմից, թողարկված ֆինանսակամ երաշխիքի պայմանագրերը չափվում են ստորև նշված հաշվապահական հաշվառման քաղաքականություններին համապատասխան՝

Ֆինանսական պարտավորություններ (ԻԱՉՇՎ) ներկայացվող

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ԻԱՉՇՎ ներկայացվող, երբ ֆինանսական պարտավորությունը հանդիսանում է՝ (ա) ձեռնարկատիրական գործունեության միավորման մեջ ձեռք բերողի պայմանական հատուցումը (բ) պահվում է առևտրային նպատակով կամ (գ) այն նախատեսված է ԻԱՉՇՎ-ի համար:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես առևտրային նպատակով պահվող եթե.

- այն բացառապես ձեռք է բերվել մոտ ապագայում վերավաճառքի նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման ժամանակ այն հանդիսանում է իդնտիֆիկացվող ֆինանսական գործիքների մի մաս, որը Ընկերությունը միասին է կառավարում և ունի կարճաժամկետ շահույթ ստանալու փաստ:
- Այն ածանցյալ գործիք է, բացառությամբ այն ածանցյալ գործիքների, որոնք հանդիսանում են ֆինանսական երաշխիքի պայմանագրեր կամ նախանշված արդյունավետ հեջավորման գործիքներից:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը միայն երբ ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները սպառվում են կամ երբ այն փոխանցում է ֆինանսական ակտիվը և էականորեն ակտիվի սեփականության բոլոր ռիսկերն ու հատույցները մեկ այլ կազմակերպության: Եթե Ընկերությունը ոչ փոխանցում է, և ոչ էլ պահպանում սեփականության հետ կապված էականորեն բոլոր ռիսկերն ու հատույցները և

շարունակում է վերահսկել փոխանցված ակտիվը, ապա Ընկերությունը ճանաչում է իր հետաքրքրությունը ակտիվի հանդեպ և այն գումարների հետ կապված պարտավորությունը, որն այն կարող է վճարել: Եթե Ընկերությունը կրում է փոխանցված ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերը և հատույցները, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև ճանաչում է ստացված օգուտների գրավադրված փոխառությունները:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի ապաճանաչման ժամանակ ակտիվի մնացորդային արժեքի և հատուցված կամ հատուցվող գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթ կամ վնասում: Ի հավելում, պարտքային գործիքի մեջ ներդրման, դասակարգված որպես «Իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող» (ԻԱՉԾՎ), ապաճանաչման ժամանակ ներդրումների վերագնահատման պահուստում նախկինում հաշվարկված կուտակային օգուտ կամ վնասը վերադասակարգվում է շահույթ կամ վնասում: Եվ հակառակը, բաժնային գործիքի մեջ ներդրման ապաճանաչման ժամանակ, որը սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը ընտրել է ԻԱՉԾՎ մեթոդը ներդրումների վերագնահատման պահուստում նախկինում հաշվարկված կուտակային օգուտ կամ վնասը չի վերադասակարգվում շահույթ կամ վնասում, այլ տեղափոխվում է կուտակված շահույթ կամ վնաս:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը միայն և միայն, երբ Ընկերությունը ֆինանսական գործիքի պարտավորություններից ազատվել է, չեղարկվել է կամ սպառվել է պայմանագրային պարտավորությունը: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության մնացորդային արժեքի և փոխհատուցված կամ փոխհատուցվող գումարի միջև տարբերությունը ճանաչվում է շահույթ կամ վնասում:

Երբ Ընկերությունը առկա վարկատուի հետ մեկ պարտքային գործիքը փոխանակում է մյուսի հետ՝ զգալիորեն տարբեր պայմաններով, ապա այսպիսի փոխանակումը դիտարկվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նույն կերպ, Ընկերությունը առկա պարտավորության կամ դրա մի մասի էական պայմանների փոփոխությունը դիտարկում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր պարտավորության ճանաչում: Ենթադրվում է, որ պայմանները էական տարբեր են համարվում, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքը, ներառյալ բոլոր վճարված վճարումների և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված և ստացված վճարումների տարբերությունը, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացորդային դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքից: Եթե փոփոխությունը էական չէ մինչև փոփոխությունը պարտավորության մնացորդային արժեքի և փոփոխությունից հետո դրամական հոսքերի ներկա արժեքի միջև, ապա տարբերությունը պետք է ճանաչվի շահույթ կամ վնասում այլ եկամուտների կամ վնասների հետ մեկտեղ, որպես փոփոխությունից շահույթ կամ վնաս:

Ֆինանսական գործիքների արժեզրկում

Պարտքային գործիքներում ներդրումների արժեզրկումից կորուստները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով կամ ԻԱՉԱՀԱ-ով, Ընկերությունը ճանաչում է հետևյալ դեպքերում՝ սպասվելիք վարկային կորուստների, ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքերի, առևտրային դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների գծով, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի պայմանագրերի մասով: «Դեբիտորական պարտքերի սպասվող կորուստների» (ԴՊՍԿ) գումարները, սկսած

համապատասխան ֆինանսական գործիքի սկզբնական ճանաչումից, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին թարմացվում են՝ վարկային ռիսկում փոփոխություններն արտացոլելու համար:

Ընկերությունը միշտ ճանաչում է ԴՊՍԿ-ը առևտրային դեբիտորական պարտքերի, պայմանագրային ակտիվների և ֆինանսական վարձակալությունից դեբիտորական պարտքերի համար: Այս ֆինանսական ակտիվներից սպասվող վարկային կորուստները գնահատվում են՝ օգտագործելով պահուստի հաշվարկման համար մշակված համապատասխան մատրիցան՝ հիմնվելով Ընկերության պատմական վարկային կորուստի փորձի վրա, ճշգրտված պարտապանների համար հատուկ գործոններով, ընդհանուր տնտեսական պայմաններով և ընթացիկ, ինչպես նաև հաշվետու ամսաթվի պայմաններին կանխատեսվող ուղղության գնահատմամբ, ներառյալ երբ կիրառելի է դրամի արժեքը ժամանակի մեջ:

Մյուս բոլոր ֆինանսական գործիքների համար, Ընկերությունը ճանաչում է ԴՊՍԿ-ն, երբ տեղի է ունեցել սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի զգալի աճ: Այնուամենայնիվ, եթե ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալի չի բարձրացել սկզբնական ճանաչումից ի վեր, ապա Ընկերությունը այդ ֆինանսական գործիքից կորուստի պահուստը չափում է 12 ամսվա ԴՊՍԿ-ի համարժեք գումարով:

ԴՊՍԿ-ն իրենից ներկայացնում է սպասվող վարկային կորուստներ ֆինանսական գործիքի ամբողջ կյանքի ընթացքում հնարավոր դեֆոլտի արդյունքում: Եվ հակառակը, 12 ամսվա ԴՊՍԿ-ն իրենից ներկայացնում է կյանքի ընթացքում ԴՊՍԿ-ի այն մասը, որը սպասվում է որ կառաջանա ֆինանսական գործիքի հնարավոր դեֆոլտից հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում:

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 24-ում:

3.8 Արժեզրկում

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է, և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ինչ վերաբերում է վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի արժեթղթերին, արժեզրկումից հետո իրական արժեքի աճն ուղղակիորեն ճանաչվում է սեփական կապիտալում:

3.9 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.10 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ Ընկերությունը ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում:Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող շահույթի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Ընկերությունը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

3.11 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.12 Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

Ընկերությունը առաջին անգամ ՖՀՄՍ 15. *«Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»* ստանդարտը կիրառել է 2018թ. հունվարի 1-ից: Մի շարք նոր ընդունված ստանդարտներ նույնպես կիրառվել են Ընկերության կողմից 2018թ. հունվարի 1-ից, բայց դրանք էական ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ընկերության կողմից նոր ընդունված ստանդարտներին անցման հետևանքով պահանջվող համադրելի ֆինանսական հաշվետվությունները չեն վերաներկայացվել:

ՖՀՄՍ 15. *«Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»* ստանդարտը սահմանում է համապարփակ մոտեցումներ հասույթի որոշման գծով, թե երբ հասույթը պետք է ճանաչվի և ինչ գումարով պետք է ճանաչվի: Սույն ստանդարտ փոխարինում է ՀՀՄՍ 18. *«Հասույթ»*, ՀՀՄՍ 11. *«Կառուցման պայմանագրեր»* ստանդարտներին և համապատասխան մեկնաբանություններին: Համաձայն ՖՀՄՍ 15. *«Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»* ստանդարտի, հասույթը ճանաչվում է, երբ գնորդը կամ ծառայություն ստացողը ձեռք է բերում վերահսկողություն ապրանքի կամ ծառայության նկատմամբ: Վերահսկողության իրավունքի փոխանցման ժամկետի որոշումը, «Ժամանակի կոնկրետ պահին», թե «Ժամանակի ընթացքում», պահանջում է դատողություններ:

Ընկերությունը ընդունել է ՖՀՄՍ 15. *«Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»* ստանդարտը՝ օգտագործելով կոմուլյատիվ (աճողական) ազդեցության մեթոդը (առանց գործնական օգուտ ունենալու մտադրության)՝ սկզբնական ընդունման պահին կիրառելով սկզբնական ընդունումից առաջացող ազդեցությունները (այսինքն՝ 2018թ. հունվարի 1-ից): Համապատասխանաբար 2017թ. համադրելի ֆինանսական տեղեկատվությունը չի վերաներկայացվել: Այսինքն այն ներկայացված է ինչպես նախորդ տարի ներկայացվել է՝ ՀՀՄՍ 18. *«Հասույթ»*, ՀՀՄՍ 11. *«Կառուցման պայմանագրեր»* ստանդարտների և մեկնաբանություններին համապատասխան: Համապատասխանաբար ՖՀՄՍ 15. *«Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»* ստանդարտով պահանջվող բացահայտումները, ինչպես ընդունված է, չեն կիրառվում համադրելի տեղեկատվության վրա:

Ընկերության հասույթի ճանաչման հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար տես ծանոթագրություն 4:

4 Հասույթ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ապրանքների վաճառքից հասույթ	25,420,004	20,091,925
Կատարված աշխատանքներից հասույթ	224,100	-
Բեռնափոխադրումներից հասույթ	146,469	118,447
	25,790,573	20,210,372

Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը տրոհված.

Հազար դրամ	Ապրանքների վաճառքից հասույթ	Կատարված աշխատանքներից հասույթ	Բեռնափոխադրումներից հասույթ	Այլ	Ընդամենը
2022թ.	Հայաստան		Հայաստան	Հայաստան	
Սեգմենտի հասույթ՝ ընդհանուր	25,420,004	224,100	146,469	-	25,790,573
Միջսեգմենտային վաճառքներից հասույթ	-	-	-	-	-
Սեգմենտի հասույթ՝ արտաքին հաճախորդներին վաճառքներից	25,420,004	224,100	146,469	-	25,790,573
Հասույթի ճանաչման ժամանակացույց					
- Ժամանակի կոնկրետ պահին	25,420,004	224,100	146,469	-	25,790,573
- Ժամանակի ընթացքում	-	-	-	-	-
	25,420,004	224,100	146,469	-	25,790,573

Հազար դրամ	Ապրանքների վաճառքից հասույթ	Բեռնափոխադրումներից հասույթ	Այլ	Ընդամենը
2021թ.	Հայաստան	Հայաստան	Հայաստան	
Սեգմենտի հասույթ՝ ընդհանուր	20,091,925	118,447	-	20,210,372
Միջսեգմենտային վաճառքներից հասույթ	-	-	-	-
Սեգմենտի հասույթ՝ արտաքին հաճախորդներին վաճառքներից	20,091,925	118,447	-	20,210,372
Հասույթի ճանաչման ժամանակացույց				
- Ժամանակի կոնկրետ պահին	20,091,925	118,447	-	20,210,372
- Ժամանակի ընթացքում	-	-	-	-
	20,091,925	118,447	-	20,210,372

<u>Պայմանագրի մնացորդներ</u>

Ստորև ներկայացված աղյուսակը ներկայացնում է հաճախորդների հետ կնքված պայմանագրերի շրջանակներում դեբիտորական պարտքերի, պայմանագրային ակտիվների և պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվություն:

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր՝ ներառված «Առևտրային և այլ դեբիտորական պարտքերում»	157,551	378,538

5 Ինքնարժեք

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վաճառված ապրանքների ինքնարժեք	22,377,070	17,143,126
Կատարված աշխատանքների ինքնարժեք	213,428	-
Բեռնափոխադրման ծախսեր	284,457.87	182,202
	22,874,956	17,325,328

6 Այլ եկամուտ/(ծախս)

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Այլ եկամուտ		
Նյութական վնասի փոխհատուցումից եկամուտ	-	1,683,584
Բանկային փոխարկումներից եկամուտ	-	-
Հիմնական միջոցների վաճառքից եկամուտներ	75,700	9,579
Այլ	227,000	173,990
	302,700	1,867,153
Այլ ծախսեր		
Պաշարների դուրս գրում	(261,284)	(4,593,469)
Դեբիտորական պարտքերի զիջում	(57,961)	(189,986)
Եկամուտներին վերաբերվող շնորհ	(47,963)	(164,013)
Տույժեր և տուգանքներ	(946)	-
Հիմնական միջոցների վաճառքից ծախսեր	(16,735)	(7,832)
Չօգտագործված արձակուրդային օրերի գծով պահուստ	(53,983)	(138,649)
Այլ	(44,514)	(24,135)
	(483,386)	(5,118,085)
	(180,686)	(3,250,932)

7 Իրացման ծախսեր

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գովազդի և մարկետինգի ծախսեր	237,536	184,738
Աշխատանքի վճարման ծախսեր	-	-
Երաշխիքներ	197,607	-
Էլեկտրականության գծով ծախսեր	224,554	135,406
Տրանսպորտային և ապահովագրական ծախսեր	210,199	197,884
Մաշվածություն	444,607	219,238
Այլ	16,376	78,629
	1,330,879	815,895

8 Վարչական ծախս

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատակիցներին հատուցումներ	2,350,931	1,675,801
Գործուղման ծախսեր	47,238	79,675
Բանկային ծառայությունների ծախսեր	60,553	61,998
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	69,792	70,385
Վարձակալության ծախսեր	-	-
Հեռահաղորդակցության ծախսեր	63,848	61,304
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	7,593	7,593
Չփոխհատուցվող հարկերի գծով ծախսեր	15,805	84,660
Այլ	54,599	93,987
	2,670,360	2,135,404

9 Ֆինանսական եկամուտ/(ծախս)

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական ծախսեր		
Վարկերի և փոխառությունների գծով տոկոսներ	(351,870)	(464,995)
Վարձակալության գծով ֆինանսական ծախս	(199,822)	(118,562)
Փոխառություններն իրական արժեքով ներկայացնելուց առաջացած ծախս	(408,874)	-
Ընդամենը ֆինանսական ծախսեր	(960,566)	(583,557)
Ֆինանսական եկամուտ		
Փոխառությունների գծով տոկոսներ	22	97
Ընդամենը ֆինանսական եկամուտ	22	97
Զուտ ֆինանսական եկամուտ/(ծախսեր)	(960,544)	(583,460)

10 Այլ ֆինանսական հոդվածներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական ակտիվներից օգուտ/(վնաս) ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով՝ դասակարգված՝ որպես վաճառքի համար մատչելի		
Փոխարժեքային տարբերություններից օգուտ/(վնաս).		
Փոխարժեքային տարբերություններից օգուտ		
- Դրամական միջոցներ և համարժեքներ	221,291	3,523
- Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	21,458	8,930
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	295,817	245,411
- Վարկեր և փոխառություններ	1,179,265	278,969
	1,717,830	536,833
Փոխարժեքային տարբերություններից վնաս		
- Դրամական միջոցներ և համարժեքներ	(407,311)	(361,116)
- Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	(365,828)	(290,845)
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	(61,096)	(7,847)
- Փոխառություններ	(42,986)	(49,277)
	(877,221)	(709,086)
Փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ/(վնաս).	840,609	(172,253)

11 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	(974)	(50,800)
Հետաձգված հարկ	92,087	20,543
	91,113	(30,257)

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ)	(1,386,242)		(4,072,900)	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2021թ.՝ 18%)	(249,524)	18.0%	733,122	18.0%
(Չհարկվող եկամուտ)/չնվազեցվող ծախսեր, զուտ	340,637	-24.6%	(39,088)	1.0%
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	91,113		694,034	19.0%

12 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Հող, շենքեր և շինություններ	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրատնտեսական գույք	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	953,376	523,271	748,392	218,362	70,230	2,513,631
Ավելացում	561,133	5,654	125,315	58,961	2,147	753,210
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(25,146)	(33,590)	-	-	(58,736)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,514,509	503,779	840,117	277,323	72,377	3,208,105
Ավելացում	327,862	31,668	182,522	642,607	132,027	1,316,686
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(37,761)	(35,315)	-	-	(73,076)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,842,371	497,687	987,324	919,930	204,404	4,451,716
Կուտակված մաշվածություն և արժեզրկում						
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	-	(213,237)	(138,644)	(83,963)	(18,781)	(454,625)
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	(13,144)	(125,974)	(18,941)	(17,022)	(8,779)	(183,860)
Օտարման հետևանքով դուրսգրում	-	17,652	33,251	-	-	50,902
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(13,144)	(321,559)	(124,335)	(100,985)	(27,560)	(587,583)
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	-	(2,742)	(870)	-	(48,635)	(52,247)
Օտարման հետևանքով դուրսգրում	-	31,854	24,486	-	-	56,341
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(13,144)	(292,447)	(100,718)	(100,985)	(76,194)	(583,490)
Հաշվեկշռային արժեք						
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	953,376	310,034	609,748	134,399	51,449	2,059,006
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,501,365	182,220	715,782	176,338	44,817	2,620,522
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,829,227	205,239	886,605	818,945	128,209	3,868,226

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 438,046 հազար դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներ ունեն զրո հաշվեկշռային արժեք (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 457,325 հազար դրամ):

13 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Ստորև ներկայացված է օգտագործման իրավունքով ակտիվների հաշվեկշռային արժեքը և ժամանակաշրջանի ընթացքում շարժը.

Հազար դրամ	Շենքեր	Ընդամենը
Սկզբնական արժեք		
2020թ. հունվարի 01-ի դրությամբ	752,134	752,134
Ավելացում	563,145	563,145
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	(76,392)	(76,392)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,238,888	1,238,888
Ավելացում	17,790	17,790
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	(35,376)	(35,376)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,221,302	1,221,302
Ավելացում	2,007,482	2,007,482
Վարձակալության փոփոխություն	(1,221,302)	(1,221,302)
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	(392,052)	(392,052)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,615,430	1,615,430

Տարեվերջի դրությամբ ապագա նվազագույն վարձավճարները, որոնք ենթակա են ստացման չչեղարկվող վարձակալությունների գծով.

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Մինչև 1 տարի	479,274	146,246
1-ից 5 տարի	2,141,095	671,500
5 տարուց ավել	-	1,678,375
	2,620,369	2,496,121

14 Հետաձգված հարկային ակտիվներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	190	15,909
Շահույթում կամ վնասում ճանաչված (ծախս)/փոխհատուցում (տես՝ ծանոթագրություն 11)	92,087	(15,719)
Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված	(1,287,580)	-
Տարեվերջի մնացորդ	(1,195,303)	190

Հազար դրամ	2022թ. հունվարի 1	Այլ համա-պարփակ ֆինան-սական արդյունք-ներում ճանաչված	Շահույթի կամ վնասի և այլ համապար-փակ ֆինանսա-կան արդյունք-ների մասին հաշվետ-վությունում ճանաչված	2022թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ				
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	11,547	-	8,721	20,268
Չօգտագործված արձակուրդային օրերի գծով պահուստ	24,956	-	9,717	34,673
	36,503	-	18,438	54,941
Հետաձգված հարկային պարտավորություններ				
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	(52)	-	52	-
Փոխառություններ	-	(1,287,580)	73,597	(1,213,983)
Այլ	(36,261)	-	-	(36,261)
	(36,313)	(1,287,580)	73,649	(1,250,244)
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	190	(1,287,580)	92,087	(1,195,303)

Հազար դրամ	2021թ. հունվարի 1	Այլ համա-պարփակ ֆինան-սական արդյունք-ներում ճանաչված	Շահույթի կամ վնասի և այլ համապար-փակ ֆինանսա-կան արդյունք-ների մասին հաշվետ-վությունում ճանաչված	2021թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ				
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	15,961	-	(4,414)	11,547
Չօգտագործված արձակուրդային օրերի գծով պահուստ	-	-	24,956	24,956
	15,961	-	20,542	36,503
Հետաձգված հարկային պարտավորություններ				
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	(52)	-	-	(52)
Այլ	-	-	(36,261)	(36,261)
	(52)	-	(36,261)	(36,313)
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	15,909	-	(15,719)	190

15 Պաշարներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ապրանքներ	14,040,182	11,717,078
Հրդեհից վնասված ապրանքներ	-	-
Հումք	130,440	419,653
Վառելիք	2,816	7
Շինանյութ	16,123	199,981
Պահեստամասեր	157,329	218,619
Անավարտ արտադրանք	-	11,220
Այլ նյութեր	48,864	48,742
	14,395,753	12,615,299

16 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	157,551	378,538
Տրված կանխավճարներ	1,908,329	1,120,973
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	11,632	-
Այլ դեբիտորական պարտքեր	60,018	200,161
	2,137,530	1,699,672

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում: Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

17 Դրամական միջոցներ և համարժեքներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	432,989	213,479
Բանկային հաշիվներ	983,570	235,919
Դրամական միջոցներ ճանապարհին	-	-
	1,416,559	449,398

18 Կապիտալ և պահուստներ

18.1 Կանոնադրական կապիտալ

Հայտարարված բաժնեմասեր	2022թ.	2021թ.
2 սովորական բաժնեմաս, որոնցից մեկը 7,250,050 ՀՀ դրամ անվանական արժեքով, մյուսը՝ 1,250,050,000 ՀՀ դրամ անվանական արժեքով	8,500,100,000	6,500,100,000

	2022թ.		2021թ.	
Բաժնետեր	բաժնեմասը (հազար դրամ)	բաժնեմասի չափը (%)	բաժնեմասը (հազար դրամ)	բաժնեմասի չափը (%)
Յուրի Աֆրիկյան	7,250,050	85.29%	5,250,050	80.77%
Մարինե Պողոսյան	1,250,050	14.71%	1,250,050	19.23%
	8,500,100	100.00%	6,500,100	100.00%

18.2 Շահաբաժիններ

2022թ. և 2021թ. ընթացքում շահաբաժիններ չեն հայտատարարվել և վճարվել:

19 Վարկեր և փոխառություններ

Հազար դրամ	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր և փոխառություններ				
ՀՀ Ֆինանսական հաստատություններից ստացված վարկեր	5,070,279	5,866,559	-	-
Կապակցված կողմերից ստացված փոխառություններ	578,346	8,709,491	4,934,389	-
	5,648,625	14,576,050	4,934,389	-

Վարկերի իրական արժեքը հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին, քանի որ զեղչման ազդեցությունն էական չէ:

Վարկերի և փոխառությունների իրական արժեքի և հաշվեկշռային արժեքի համեմատությունը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	Իրական արժեք		Հաշվեկշռային արժեք	
	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
*Չապահովված փոխառություններ ԻԱՀՇՎ-ում**				
Կապակցված կողմերից ստացված փոխառություններ	12,257,660	8,709,491	5,512,735	8,709,491
	12,257,660	8,709,491	5,512,735	8,709,491

Ապահովված վարկեր ամորտիզացված արժեքով հաշվարկված				
ՀՀ Ֆինանսական հաստատություններից ներգրավված վարկեր և օվերդրաֆտներ	5,070,279	5,866,559	5,070,279	5,866,559
	5,070,279	5,866,559	5,070,279	5,866,559
	17,327,938	14,576,050	10,583,013	14,576,050

* ԻԱՉԾՎ՝ իրական արժեքով չափվող շահույթում կամ վնասում

Բոլոր վարկերը կարճաժամկետ են: Բանկային վարկերի գծով 2022թ.-ին հաշվեգրվել է 351,870 հազար դրամ տոկոսային ծախս (2021թ.՝ 583,557 հազար դրամ): Փոխառությունները ներգրավված են ՀՀ դրամով, տարեկան 0% տոկոսադրույքով:

20 Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով

Ստորև ներկայացված է վարձակալության գծով պարտավորությունները (ներառյալ վարձավճարի գծով պարտավորությունները) և ժամանակաշրջանի ընթացքում փոփոխությունները.

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սկզբնական մնացորդ	1,279,643	1,321,750
Ավելացում	2,007,482	17,790
Վարձակալության փոփոխություն	(1,279,643)	-
Տոկոսների ավելացում	199,822	118,562
Վճարված վարձավճար	(479,274)	(178,459)
Տարվա վերջի դրությամբ	1,728,030	1,279,643
Ընթացիկ	1,365,822	815,156
Ոչ ընթացիկ	362,209	464,487
	1,728,031	1,279,643

Ստորև ներկայացված է շահույթում կամ վնասում ճանաչված գումարները.

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների մաշվածություն	392,052	35,376
Տոկոսային ծախսեր կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	199,822	118,562
	591,874	153,938

21 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	926,771	1,295,764
Հաճախորդներից կանխավճարներ	955,631	51,851
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	1,409	-
Գործառնական վարձակալություն	43,953	28,415
Այլ	-	-
	1,927,764	1,376,030

22 Պահուստներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Ընթացիկ	Ոչ ընթացիկ	Ընթացիկ	Ոչ ընթացիկ
Պահուստներ շարունակական գործառնական ծախսումների գծով	192,632	-	138,649	-

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ավելացում	Հակադարձում	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չօգտագործված արձակուրդային պահուստ	138,649	53,983	-	192,632
	138,649	53,983	-	192,632

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ավելացում	Հակադարձում	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չօգտագործված արձակուրդային պահուստ	-	138,649	-	138,649
	-	138,649	-	138,649

23 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

23.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Հաշվապահական գնահատումները հիմնականում վերաբերվում են հիմնական միջոցների օգտակար ծառայություններ ժամկետներին:

24 Ֆինանսական գործիքներ

24.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Այս ծանոթագրությունը տեղեկատվություն է տալիս Ընկերության ֆինանսական գործիքների վերաբերյալ, ներառյալ՝

- Ֆինանսական գործիքի յուրաքանչյուր տեսակի գծով սպեցիֆիկ տեղեկատվություն
- Ֆինանսական գործիքների իրական արժեքի որոշման գծով տեղեկատվություն, ներառյալ դատողությունները և գնահատումների անորոշությունները

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.7-ում:

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ՝ ամորտիզացված արժեքով չափվող		
- Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	217,569	578,699
- Դրամական միջոցներ և համարժեքներ	1,416,559	449,398
	1,634,128	1,028,097

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական պարտավորություններ՝ ամորտիզացված արժեքով չափվող		
- Վարկեր և փոխառություններ	10,583,013	14,576,050
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	926,771	1,295,764
	11,509,785	15,871,814

24.2 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Այս ռիսկի ազդեցությունը Ընկերության համար առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը, ժամկետային ավանդները, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները, ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները և այլն: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները		
- Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	217,569	578,699
- Դրամական միջոցներ և համարժեքներ	1,416,559	449,398
	1,634,128	1,028,097

Հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Ընկերություն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը:

դ) Արտարժութային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Ընկերության գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Ընկերության՝ արտերկրյա վաճառքներից և ձեռքբերումներից, ինչպես նաև արտարժութային փոխառություններից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են Ռուսական ռուբլիով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև:

Արտացոլված գումարները իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով:

Հոդված 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Եվրո	Ռուսական ռուբլի	ԱՄՆ դոլար	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
- Դրամական միջոցներ և համարժեքներ	8,160	1,382	682,368	691,910
	8,160	1,382	682,368	691,910
Ֆինանսական պարտավորություններ				
- Վարկեր և փոխառություններ	28,144	-	4,412,766	4,440,910
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	341,867	9,690	397,463	749,019
	370,011	9,690	4,810,229	5,189,929
Զուտ արդյունք	(361,851)	(8,308)	(4,127,860)	(4,498,019)

Հոդված 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Եվրո	Ռուսական ռուբլի	ԱՄՆ դոլար	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
- Դրամական միջոցներ և համարժեքներ	3,500	10,357	(2,778)	11,079
	3,500	10,357	(2,778)	11,079
Ֆինանսական պարտավորություններ				
- Վարկեր և փոխառություններ	-	589,637	4,158,591	4,748,228
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	303,897	90,993	578,015	972,905
	303,897	680,630	4,736,606	5,721,132
Զուտ արդյունք	(300,398)	(670,272)	(4,739,384)	(5,710,054)

24.3 Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով:

Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ հաշվառելով ֆինանսական լծակը (զուտ պարտավորությունը բաժանած ընդհանուր կապիտալի վրա) հետևյալ կերպ.

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր փոխառություններ	10,583,013	14,576,050
Հանած՝ մնացորդներ դրամարկղում և բանկերում	1,416,559	449,398
Զուտ պարտավորություն	9,166,455	14,126,652
Ընհանուր կապիտալ	7,808,308	1,237,795
	16,974,762	15,364,447
Ֆինանսական լծակ	0.54	0.92

24.4 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված իրական արժեքի չափումները

Ընկերությունը ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է գնահատման մեթոդներ, ինչպես ներկայացված է ՖՀՄՍ 13-ում «*Իրական արժեքի չափումը*»:

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),

- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),

- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Հազար դրամ		Իրական արժեքի չափման հիերարխիա		
Նկարագրություն	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	217,569	217,569	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,416,559	1,416,559	-	-
	1,634,128	1,634,128	-	-

Հազար դրամ		Իրական արժեքի հիերարխիայի չափում		
Նկարագրություն	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Իրական արժեքով չափվող պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	10,583,013	-	10,583,013	
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	926,771	926,771	-	-
Ընդամենը	11,509,785	926,771	10,583,013	-

Հազար դրամ	Իրական արժեքի չափման հիերարխիա			
Նկարագրություն	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	578,699	578,699	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	449,398	449,398	-	-
	1,028,097	1,028,097	-	-

Հազար դրամ	Իրական արժեքի հիերարխիայի չափում			
Նկարագրություն	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Իրական արժեքով չափվող պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	14,576,050	5,866,559	8,709,491	
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,295,764	1,295,764	-	-
Ընդամենը	15,871,814	7,162,323	8,709,491	-

25 Պայմանականություններ

25.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով, ինչպես նաև տարածաշրջանի տնտեսական ճգնաժամը: Ընկերության վրա այս գործոնների հնարավոր հետևանքները կարող են ներառել վարկատուների հանդեպ անվճարունակությունը, խաթարված հեղինակությունը, վաճառքների, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված դժվարությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Ընկերության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ: Բացի այդ, համաշխարհային տնտեսության աճի նվազման կանխատեսումներով պայմանավորված՝ Հայաստանի հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վերաբերյալ դեռևս առկա են անորոշություններ, ինչը կարող է հանգեցնել արտերկրից դրամային փոխանցումների կրճատմանը, ինչպես նաև

հանքահումքային ապրանքների միջազգային գների անկմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը մեծ կախման մեջ է գտնվում: Շուկայական ավելի խիստ ճնշումը կարող է հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Ընկերության վիճակի վատթարացման: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, Ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ճշգրտումների ազդեցությունը, եթե այդպիսիք կան, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթե ներկա տարածաշրջանային ճգնաժամի ազդեցությունը Հայաստանում նկատելի և արժանահավատորեն գնահատելի լիներ:

25.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

25.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

25.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Շրջակա միջավայրը, որտեղ Ընկերությունը գործում է, չի պահանջում, որպեսզի Ընկերությունը ներկայացնի շրջակա միջավայրի վրա իր ունեցած ազդեցության տարեկան հաշվետվություն կամ համանման զեկույց: Ղեկավարության համոզմամբ՝ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

26 Գործարքներ կապակցված կողմերի միջև

Ընկերության կապակցված կողմերը ներառում են Ընկերության մասնակիցներին, այլ կազմակերպություններ և հիմնական ղեկավար անձնակազմը: Ընկերության վերջնական

վերահսկող է հանդիսանում Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը: Ընկերության կապակցված կողմերը և նրանց հետ գործարքները ներկայացված են ստորև:

26.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է Յուրի Աֆրիկյանի կողմից, ում պատկանում է Ընկերության բաժնեմասերի 85.29%-ը և Մարինե Պողոսյանի կողմից, ում պատկանում է Ընկերության բաժնեմասերի 14.71%-ը:

26.2 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության տնօրենն է Մարինե Պողոսյանը: Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Փոխհատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Աշխատավարձ և պարգևատրումներ, ներառյալ սոցիալական ապահովության վճարները	124,200	60,400
	124,200	60,400